Հարութ Արմենի Հովհաննիսյան

Ծնվել է քաղաք Եղեգնաձորում: Սովորում է Եղեգնաձորի տարածաշրջանային քոլեջի ծրագրավորման բաժնում:
Վիրավորում է ստացել հոկտեմբերի 22-ին՝ Մարտակերտի շրջանում:
Արժանացել է <Քաջարի մարտիկ> շքանշանի:

Գագիկ Բաբկենի Մկրտչյան

Ծնվել է Ագարակաձոր գյուղում: Ծառայել է Վայքի զորամասում որպես ավագ ենթասպա: Հոկտեմբերի 13-ին Ջրականի մարտերի ժամանակ ծանր վիրավորում է ստացել: Արժանացել է <Անբասիր ծառայության համար> մեդալի:
Ամուսնացած է, ունի երկու որդի:

Իշխան Սիմոնի Լուսինյան

Ծնվել է Եղեգնաձոր քաղաքում, մասնագիտությամբ իրավաբան է, աշխատում է ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում որպես դատավորի օգնական: 44-օրյա պատերազմում եղել է ավագ սպա և հրետանային դասակի հրամանատար: Վիրավորում է ստացել պատերազմի վերջին օրը՝ Շուռնուխում:

Արամ Վարդանի Մելիքսեթյան

Ծնվել է Արտաբույնք գյուղում: Սովորում է Մխիթար Հերացու անվան ԵՊԲՀ-ի ընդհանուր բժշկության ֆակուլտետում: Ծառայել է Մարտունի 2-ում որպես բուժակ: Հոկտեմբերի 23-ին ծանր վիրավորում է ստացել Հադրութի շրջանի Վարանդա քաղաքում՝ ոտքից զրկվելու գնով փրկելով բազում կյանքեր: